



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

6850

Young  
for refuge

28 (075))

U-53

1 OCT 2009

8(075)

Հ-53

ԴԱՍԱԳԻՐՔ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ԸՆՏԱՆԻԱՆ ՀԱՆԱՏՈՅ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ Ա. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Յօրինեաց

ԳԱԲՐԻԵԼ Ա.ՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Ա.Յ.Ա.ԶԵԱՆ

Ի ՊԵՏԱ ՄԻՋԱԿԱՐԴ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

ԱԶԳԻՒ ՀԱՑՈՑ

Ի ՎԱՂԱՐՃԱՊԱՏ

Ի ՑԱՐԱՆԻ ՄՐԵՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ ԵԶՄԻԱԾՆԻ

1875 - ԹՅԻԵ

# ԲԱՐԵՒՐԱՐՔ ՃԵՄԱՀԱՆԻ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ Պ. ԻՉՄԻԱՅԻՆ

## ՈՐ Ի ՎԱԼԱՐՁԱՊԱՏ.

ՄԵՏԱԶԵՆԱԿՈՐ ՊԱՇՏՊԱՆԻՔ.

1. Կարապետ Ալբերտիկովսկովը՝ հանդուցեալ թեմա-կան կարնոյ եւ Տիվիեաց.
  2. ԳԵորգ. Մանուկեան Կալկաթացի հանդուցեալ
  3. Ստիհա Զավշալմաքեանց Տիվիեացի
  4. Յովհաննէս Յովհաննեանց (ի լոսկով):

ՊԱՇՏՊԱՆՔ

5. Քաղաքացիք Նորոյն Նախկինությունի
  6. " Ղալարայ
  7. " Մողդոկի
  8. Ակելինէ Ալամալի անց Ն. Նախկինություն
  9. Առևլուան Մ'Էլիք - Բէդարեանց Տիփսիսեցի
  10. Կարապետ Թիվքիյեանց Գրիգորուազօլսեցի Համապատասխան:

ԺԱՄԱՆԱԿԱՆՈՐ.Բ.



28(025)

4-53

ԴԱՍԱԳԻՐՔ

# ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

## ՊԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՀԱՅ ՈՒՂԴԱՓՈՐ ՀԱՆԱՏՈՅ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

1006

ՅօՐԻՆԵԱԾ

ԴԱԲՐԻՒԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆ

## Ի ՊԵՏԱ ՄԻԶՆԱԿԱՐԴ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՅ

ԱԶԳԻՒ ՀԱՅՈՑ

## 卷之三

Ի ՎԱՂԱՐՃԱՊԱՏ

Ի ՑԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ ԷԶՄԻԱՇՆԻ

1875 - ՌՅՈՒԵ

М. А. Масникова  
ИЗДАНИЕ ЧИСЛЕННО

11 FEB 2013

6850

## ՎԵՀԱՓԱՌ ՏԵՐ

ԱՍՏՈՒԱԾԱԲԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏ.

### ՀՐԱՄԱՆԱԿ

#### Տ+ Տ+ ԳԵՂԱՐԳԵԾ Դ+

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒԴԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Զոր իբր ի քսանից տմաց հետէ շա-  
ռագրեալ եւ հրատարակեալ էր իմ ի  
Փարիզ հրամանաւ Տեառն Յակովբայ հո-  
ելոյս Արքեպիսկոպոսի եւ երբեմն Պատ-  
րիարքի Կոստանդնուպօլսոյ ընդ ա-  
նուամբս, « Վարդապետարան ուղղա-  
փառ հաւատոյ Հայաստանեայց եկեղեց-  
ւոյ » , զնոյն աւասիկ երկասիրութիւն  
ըստ պատուիրանի Մեծի Հայրապետիդ  
յակն արկի զարդիս վերստին, եւ յզկեալ  
յարդարեցի իմոլսանն ջանիւ եւ կարո-  
ղութեամբ՝ ոչ միայն ըստ ասացուածոյն,

այլ եւ բազում ուրեք ըստ իմաստիցն բովանդակութեան, եւ խոնարհ հպատակութեամբ արկանեմ ընդ քննողական վճռով գերագոյն Գլխոյդ Հայաստանեայց Եկեղեցւոյ:

Դուզնաքեայս իմ վաստակ՝ կարգեալ ի պէտօ միջակային ուսումնարանաց ազգիս մերոյ՝ եթէ արժանացի Հաճութեան եւ հաւանութեան Վեհափառութեան Զերոյ, ակն ունիմ զի եւ այլցն հմտից այսօրինակ պիտոյից ազգիս եղիցի սա ընդունելի իշրեւ զնախագաւիթ իմն ճոխագունից առոտուածաբանական դասագրոց:

Ապաքէն ի սոցա սակի են եւ պատրաստեալքն առ յինէն Զերովդ պաշտեմի հրամանաւ քառահատոր ընդարձակագոյն դասագիրք՝ կարգեալք ի պէտօ Ճեռնադրելեաց ի ժառանգաւորութիւն

սրբոյ Եկեղեցւոյ, որպէս եւ աշակերտաց բարձրագոյն դասարանաց թեմական Դպրանոցայն մերոց, այսինքն են Համառօտ Աստուածաբանութիւն Տեսական, Համառօտ Աստուածաբանութիւն Բարոյական, Համառօտութիւն Եկեղեցական Պատմութեան, եւ Հմոռութիւն կարգաց աստուածապաշտութեան եւ արարողութեանց Հայաստանեայց Եկեղեցւոյ : Արդ՝ այժմէն իսկ մաղթելով ի վերայ նոցին, որպէս եւ ի վերայ այսր աշխատասիրութեան իմոյ զհաճութիւն եւ զօրհնութիւն մերոյ Վեհապետիդ, մնամ

ՎեհԱՓՈՒՏ ՏԵՐ,

ԶԵՐՈՒՄԴ ԱՍՏՈՒԱՇԱՐԵԱԼ, ՄՐՅԱՉՆՈՒԹԵԱՆ

Ամենափոնարհ ծառայ եւ որդի  
ԳՈՐԻՐԵԼ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆ

ԹԵՍԵԳԻՐՔ

## Ք Ր Ի Ս Ո Ն Է Ա Կ Ա Ն

### Պ Ե Ր Դ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Ե Ը Ն

Մ Ս Ս Ն Ա Ռ Ա Զ Ի Ն

Մ Ա Ս Ո Ւ Ք Ք Ր Ի Ս Ո Ն Է Ա Կ Ա Ն Հ Ա Խ Ա Տ Ո Յ Ե

Դ Ա Ս Ո Յ Ե

Մ ա ր դ ոյ վ ա խ ա ն ա ն

Հ ա ր ց ո ւ մ ն . — Մ ա ր դ լ ի ն է բ ա մ ի կ ր ա զ ա յ ի վ ե ր ք ա ն  
գ ա մ ե ն ա յ ն :

Պ ա տ ա ս ի ս մ ի , — Ե ղ ջ ա ն կ լ ո ւ թ ե ա ն :

Հ . ձ շ մ ա ր տ ա պ է ս ե ր ջ ա ն ի կ ն հ վ է :

Պ . Ո վ ո ր գ ե ր ա գ ո յ ն բ ա ր ի ն ո ւ ն ի , ո ւ պ ի ս ի ո ւ ն ե ա յ  
յ ա յ յ ա խ ա ն :

Հ . Գ ե ր ա գ ո յ ն բ ա ր ի ն լ ի ն է :

Պ. Աստուած. մեր Աստուծոյ համար եղած եմք,  
նա է մեր մի միայն վախճանն եւ երջանկութիւնը:

Հ. Այս աշխարհիս մէջ ճշմարտապէս երջանիկ լի-  
նելը կարելի բնդն է:

Պ. Ոչ. այս աշխարհիս մէջ մարդ միայն յաւիտե-  
նական երջանկութեան յուսովն կարող է երջանիկ լի-  
նել, եւ այն եւս անկատար կերպիւ,

Հ. Յաւիտենական երջանկութեան հասնելու համար  
ինչ պէտք է անել,

Պ. Պէտք է զԱստուած ձանջնալ, սիրել ու պաշտել:

### ԴԱՍ

#### Ա Ս Ն Ե Ա Ծ .

Հ. Աստուած ինչ է:

Պ. Աստուած է ամենապարզ Հոգի եւ ամենակատար  
էակ:

Հ. Աստուած Հոգի է ասելով ինչ կիմանաս:

Պ. Ասել Կուղեմ թէ ոչ մարմին ունի, ոչ կերպա-  
րանք, ոչ ձեւ, ոչ գոյն, ուստի մեր զգայութեանց  
ներքեւ չընկնիր:

Հ. Ամենակատար էակ ինչն կանեն Աստուծոյ:

Պ. Վասն զի ամենայն կատարելութիւն ունի:

Հ. Այն կատարելութեանց մէկ քանին ասան:

Պ. Աստուծոյ կատարելութեանց գլխաւորներն սրբա-  
հն, որ անակիզբն է եւ անվախան, յաւիտենական,

ամենակարող եւ անփոփոխ ամէն բան գիտէ, ամէն  
բանի տէր ու ստեղծող է. ամէն տեղ է, եւ ամէն  
բան կկառալարէ:

Հ. Ինչն կիմանալը որ կայ մէկ Աստուած:

Պ. Երբեք երկնիքն ու երկիքս կդժտեմք, ու մեր  
վերայ եւս կնայիմք, իսկոյն կհասկանամք որ սոքա  
ամէնքը մի միայն ստեղծող ունին, եւ ահա նա է Աս-  
տուած:

Հ. Օրինակով հասկացուր ասածք:

Պ. Այս սունա ինքիմէ շինուած է ասելն անմտու-  
թիւն է. քան զայս աւելի մեծ անմտութիւն է կարծելն  
թէ պյո հրաշալի կարգաւորութեամբ ստեղծուած աշ-  
խարհս կամ դիպուածով է եղած, կամ այլ եւ պյո  
աստուածներէ ստեղծուել է:

### ԴԱՍ Գ.

#### Սուրբ ԵՐՐՈՐԴՈՒՐԲԻԱ.

Հ. Միայն մէկ Աստուած կայ:

Պ. Այն, եւ մէկն աւելի կարելի չէ որ լինի:

Հ. Հապա Հայր, Որդին Հոգին սուրբ մէկ մէկ  
Աստուած չին:

Պ. Ոչ. նորա թէպէտ յերիս անձինս իրարմէ զա-  
նազանեալ են, բայց մի միայն են անբաժան Աստու-  
ծութեամբ:

Հ. Երեք անձինքն ինչնիւ մի միայն Աստուած կասուին:

Պ. Վասն զի երեքն եւս մի եւ նոյն Աստուածութիւնն ունին:

Հ. Խնչմկ կզանազանին յիրերաց:

Պ. Ասովոր Հայրն Որդի է, Որդին Հոգի սուրբ է, եւ Հոգին սուրբ ոչ Հայր է եւ ոչ Որդի:

Հ. Հայր, Որդի, եւ Հոգին սուրբ՝ Աստուած են:

Պ. Այս Հայր Աստուած է, Որդին Աստուած է, Հոգին սուրբ Աստուած է, բայց այս երեք անձինք միայն մի Աստուած են:

Հ. Առաջին անձն ինչն կասուի Հայր:

Պ. Վասն զի ի յաւիտենից ծնեալ է զՈրդին զհամարդակից եւր:

Հ. Որդին համագոյակից Հօր ասելով ինչ կիմանս:

Պ. Կիմանամ որ նոյն բնութիւն, նոյն գոյութիւնն աստուածութիւնն ունի՝ զոր ինչ եւ Հայր:

Հ. Համագոյակից Հօր խօսքն մեր լեզուն մէջ ուրիշն իերպալ կասուի:

Պ. Նոյն ինքն ի բնութենք Հօր, այսինքն՝ Հօր Աստուածոյ նոյն բնութենէն:

Հ. Երեսորդ անձն ինչն կասուի Որդի:

Պ. Վասն զի ծնեալ է ի Զօրէ ի յաւիտենից՝ որպէս բան ի մոտաց:

Հ. Հոգին սուրբ ինչն համար Երրորդ անձն կասուի:

Պ. Վասն զի Հոգին սուրբ բղնէ իերեւ սէր ի կամաց Հօր, եւ կամ որպէս ջուր յականէ, եւ առնու կամ յառաջադայի յՈրդւոյ որպէս յաղբերէ՝ ի յաւիտենից:

Հ. Ուրեմն Հաւատամքին մէջ այս խօսքս կարելի է տւելցընել Հոգւոյն սրբայ համար թէ „Որ ի Զօրէ եւ յՈրդւոյ բղիսի, :

Պ. Ոչ, զի սուրբ Հարք մեր հսկական Հաւատամքին ընկալան, եւ անոր վերայ՝ միայն առ հարկի քանի մի բացատրական բաւեր դրին տեղ տեղ, բայց նոր եւ մասս տուող բան, եւ խօսք չտւելցուցին, ապա մեր եւս պարտական եւիք նոցա հետքէն չզարտուղիլ:

Հ. Արդեօք Հայրն Աստուած յառաջ է ժամանակաւ քան զՈրդի եւ զՀոգին սուրբ:

Պ. Ոչ, Երեքն եւս յաւիտենական են, ուստի եւ մշտնշենաւորակից կասուին, ոչ սկզբն ունեցած են եւ ոչ վերջ պիտի ունենան:

Հ. Երեք անձինք՝ կարողութեան, մեծութեան, կատարելութեան կողմանէ զանազանութիւն չունին յԵրբաց:

Պ. Ոչ, այլ հաւասար են յամենապնի:

Հ. Խնչմկ համար:

Պ. Վասն զի Երեքն եւս նոյն աստուածութիւնն ունին, որով են, մի միայն Ամենակարող, մի միայն Ամենամեծ, եւ մի միայն Ամենակատարեալ Աստուած:

Հ. Ի՞նչպէս կարելի է որ Երեք անձինքը զանազանին յիրերաց ու գարձեալ մի եւ նոյն Աստուածն լինին:

Պ. Խորհուրդ է այս արդարեւ մեր մոտաց անկննելի, բայց կիսոստվանիմք, եւ անտարակյս կհաւատամք, վասն զի Աստուած այնպէս յալտնեալ է ի սուրբ գերա

Հ. Այս խորհուրդը թնջ կասուիւ  
Պ. Խորհուրդ ամենասուրբ Երրորդութեան:

ԴԱՍ Գ.

Ստեղծումն աշխարհի.

Հ. Աստուած ինչըն կճանաչեմք:

Պ. Նորա արարածներէն:

Հ. Աստուածոյ արարածներն որննք են:

Պ. Երկնքն ու երկիր՝ նոցա մէջի բաներով:

Հ. Երկնքն ու երկիրս մէջ եղած բաներն որննք են:

Պ. Հրեշտակը եւ մարդիկ, արեւ, լուսին եւ աս-

տեղք, բյուզ եւ կենդանիք, ջուր, հող, օդ, կրակ  
եւ այլ ամէն բան:

Հ. Աստուած թնջէս ստեղծեց այդ բաներն:

Պ. Իւր խօսքովը, այս ինքն՝ Ասաց եւ եղեն:

Հ. Ասաց եւ եղեն ասելով թնջ կիմանաս:

Պ. Կիմանամ որ Աստուած ոչնչէն ստեղծեց ամէն  
բան երբ եւ ինչպէս որ կամեցաւ:

Հ. Ուշնչէն ստեղծել թնջ կնշանակէ:

Պ. Կնշանակէ թէ այն բաներուն եւ ոչ մին չկար  
առաջ, այլ Աստուած երբոր կամեցաւ ստեղծեց:

Հ. Ուրեմն այս աշխարհն, եւ թնջ որ կտեսնեմ:

Ժամանակ եղած է որ չկային:

Պ. Ու. ասկէ վեց եօթը հաղար տարի, կամ դարե-  
րով առաջ, այդ բաներն չկային:

Հ. Ուրեմն անափ յառաջ թնջ կար:

Պ. Անպան Աստուած, Հայր՝ Որդի եւ Հոգին սուրբ:

Հ. Ուր է Աստուած:

Պ. Ինքն յիմքեան, ինչպէս որ ամէն բան եւս ինմա-  
եւ նովաւ եղած է:

Հ. Ինչիւ համար ստեղծեց Աստուած գաշխարհն:

Պ. Իւր գալացաց համար, այս ինքն՝ որպէս զի իւր  
արարածներն զինքը ժամանչն, սիրեն ու պաշտեն:

Հ. Աստուած մոլափ ժամանակի մէջ ստեղծեց աշ-  
խարհն:

Պ. Վեց օրուան մէջ:

Հ. Աւելի շուտով կարմու էր ստեղծել:

Պ. Այս եթէ կամենար՝ մէկ բոպէի մէջ եւս կա-  
րող էր ստեղծել, վասն զի ամենակարող է:

Հ. Արարածոց մէջ կատարելագոյնք որոնք են:

Պ. Հրեշտակը եւ մարդիկ:

ԴԱՍ Ե.

Հրեշտակի եւ դեմ:

Հ. Հրեշտակն թնջ է:

Պ. Հոգեզէն ամսարմին արարած:

Հ. Աստուած ինչիւ ստեղծեց հրեշտակները:

Պ. Որպէս զի երջանիկ լինին, եւ զինքը փառաւո-  
րեն:

Հ. Հրեշտակաց երջանկութիւնն թնջ է:

Պ. ԶԱՍՏՈՒԱԾ ՃԱՆՀԱԱԼ, ԱԲՐԵԼ, ԵՎ յաւիտեան  
ԺԱՈԱՆԴԵԼ:

Հ. ԱՄԵՆԱՅՆ ՀՐԵՇՄԱԿՔ ԵՎԱ ունին այս երջանկու-  
թիւնը:

Պ. ՈՀ. ԹՀԱՔԵՄ իսկզբան ամէնքն եւս ունին, բայց  
ոմանք իրենց հպարտութեամբը զրկուեցան յերջան-  
կութենէ:

Հ. ԵՐՋԱՆԻԿ ՀՐԵՇՄԱԿՆԵՐՆ որմնք են:

Պ. Նորա որ ԱՍՏՈՒԾՈՂ հաւատարիմ մնացին:

Հ. ԹՇՈՒԱՌԱԳԵՐԱԼ ՀՐԵՇՄԱԿՆԵՐՆ որմնք են:

Պ. Նորա' որ ապատամբեցան յԱՍՏՈՒԾՈՂ, ԵՎ կար-  
ծեցին թէ ԱՍՏՈՒԾՈՂ նման եւ ԱՍՏՈՒԾՈՂ հաւատար  
կարող են լինել:

Հ. ԵՐՋԱՆԻԿ ՀՐԵՇՄԱԿՆԵՐՆ ԲՆՀ կասուին:

Պ. Բարի ՀՐԵՇՄԱԿ, կամ պարզապէս ՀՐԵՇՄԱԿ:

Հ. ԱՎԱՏՈՒՄԲ ՀՐԵՇՄԱԿՆԵՐՆ ԲՆՀ կասուին:

Պ. Զար ՀՐԵՇՄԱԿ, կամ ԴԵԼ, ՍԱՏՈՒԱՅ, Ա.Յ չար,  
Խաւարյին ոգի, ԵՎ այլն:

Հ. ԴԻԵԼԵՐԸ միշտ չնդր եղած են:

Պ. ՈՀ. նորա եւս այլոց պէս բարի ստեղծուած  
էին, բայց իրենց մեղքն չարցան:

Հ. Բարի ՀՐԵՇՄԱԿԱԳ գլխաւորներն որմնք են:

Պ. ՄԻՔԱՅԷԼ ԵՎ ԳԱԲՐԵԼ:

Հ. ԴԻԵԼ գլխաւորն ԲՆՀ կասուի:

Պ. ՍԱԼԱՅԷԼ, կամ ԱՐԱՆԵՐԱԿ, որ ՍԱՏՈՒԱՅ եւս  
կարողի:

Հ. Ա. յժմ հրեշտակներն նւր են:

Պ. Յերկինս, ուր զԱՍՏՈՒԱԾ կտեսնեն ու կփա-  
ռաւորեն յաւիտեան:

Հ. Ուշիշ արարածոց հետ ԲՆՀ յարաբերութիւն  
ունին:

Պ. Խբրեւ պաշտօնեալյք ԱՍՏՈՒԾՈՂ՝ նորա հրաման-  
ները կկատարեն արարածոց վերայ:

Հ. Մարդկանց վերայ ԲՆՀ մամնաւոր խնամք ունին:

Պ. Մարդկանց պաշտպան ու պահապան են:

Հ. Զար հրեշտակաց ԲՆՀ պատիժ տուաւ ԱՍՏՈՒԱԾ:

Պ. Դժոխոց յաւիտենական տանջանքը:

Հ. Ա. մէն սատանաներն եւս դժոխոց մէջ են:

Պ. Ա. մէնքն եւս յաւիտենական տանջանաց դատա-  
պարտեալ են, թէպէտ եւ յօդս կամ ի վերայ երկի

կորփորն երբեմն:

Հ. Երկիրս վերայ ենջն կօրփուին:

Պ. Որպէս զի զմարդեկ փորձեն, ԵՎ եթէ կարողա-  
նան' նոցա վնաս եւս հացունեն:

Հ. Երկիրս վերայ մինչեւ թըք պիտի կարենան մնալ  
սատանաները:

Պ. Մինչեւ աշխարհիս վերջը, ապա դժոխոց պիտի  
փակուեն:

ԴԱՍ Զ.

Մարդիկ.

Հ. Մարդն ինչ է:

Պ. Բանաւոր արարած, որ ունի հոգի եւ մարմին:

Հ. Խնձու բանաւոր արարած կասուի:

Պ. Վասն զի բանականութեամբ կարօֆի, եւ չարն ու բարին կճանաչէ:

Հ. Ի՞նչ բանէ ստեղծեց Աստուած մարդուն մարմինը:

Պ. Ի հողոյ:

Հ. Մարդու հոգին ինչ է:

Պ. Անմահ էակ է մարդկացին մարմնոյ հետ միացած:

Հ. Մարդն ինչնու ստեղծուած է:

Պ. Որ հրեշտակաց պէս երջանիկ լինի:

Հ. Մարդն ինչ վիճակի մէջ ստեղծուեցաւ:

Պ. Սուըր, արդար եւ անմեղ վիճակի մէջ:

Հ. Մարդն մահկանացն ստեղծուած էր թէ անմահ:

Պ. Մարդն անմահ մնալու համար ստեղծուած էր, ուստի ոչ հիւանդաւթիւն պիտի ունենար, ոչ դաւ եւ ոչ ստառապամիք:

Հ. Ուրեմն մեր ինձու այսօնափ թշրւառութիւն եւ մետ կըրեմք թէ հոգեւոր եւ թէ մարմնաւոր, եւ կմեռնիմք եւս:

Պ. Վասն զի մեր նախածնողքը մեղանձեցին լնու-  
թէմ Աստուածութեամբ մարմնաց առաջ լուսում լի:

ԴԱՍ Է.

Աղամ եւ Եւա, եւ Անցա մեղիք.

Հ. Մեր նախածնողաց անուններն ինչ են:

Պ. Ադամ եւ Եւա:

Հ. Խնձու նախածնողք կասուին:

Պ. Վասն զի ամենայն մարդիկ նոցա սերունդն են:

Հ. Ի՞նչ կերպով ստեղծեց Աստուած զԱւամն ու  
կեան:

Պ. Ադամը հոգէն, ու Եւան Ադաման մէկ կողէն:

Հ. Ադամ ու Եւա առաջ հւր բնակեցան:

Պ. Ի դրամատին:

Հ. Գրաման ինչ էր:


Պ. Գեղեցիկ պարտէզ' ամէն տեսակ պտուաներով լի:

Հ. Մարդկանց կեանքն ինչպէս. պիտի լինէր ի գը-  
րախտին:

Պ. Հանգիստ ու երջանիկ. պիտի աշխատէին առանց  
յոդնելու, զԱստուած պիտի փառաւորէին առանց  
ձանձրանալու, երկինք պիտի վերանային առանց մեռ-  
նելու, եւ անդ յաւիտեան երանելի պիտի լինէին.

Հ. Ի՞նչպէս կորուսին Ադամ ու Եւան այդ երջան-  
կութիւնն:

Պ. Մեղանձելու



- Հ. Ի՞նչ էր նոցա մեղքը:  
 Պ. Աստուծոյ հրամանին չհնազանդելով՝ արգիլած պատուղն ուտել:  
 Հ. Ի՞նչ կերպով արին նոքա այս մեղքն:  
 Պ. Եւան սատանայէն խաբուեցաւ, Ադամ եւս Եւայի խօռվեն լսեց, ու կերառ արգիլած պատղէն:  
 Հ. Սատանան ինչպէս խաբեց զեւան:  
 Պ. Օձի կերպարանք մոտած՝ խաբէական խսպամտնք անելով:

### ՈՒՍՏ

Ադամայ և Եւայի պատիմք.

- Հ. Ադամանց ու Եւայի յանցանաց պատիմքն ինչ եղաւ:  
 Պ. Մարմնաւոր եւ հոգեւոր թշուառութիւններ, յայսմ աշխարհի եւս ի համարեցեալն:  
 Հ. Մարմնաւոր թշուառութիւններն որմնք են:  
 Պ. Տառապանք, հիւանդութիւնք եւ մահ:  
 Հ. Հոգեւոր թշուառութիւններն որմնք են:  
 Պ. Տգիտութիւն, ցանկութիւնն, եւ սատանային իշխանութեանը ներգեւ մնալ:  
 Հ. Ցանկութիւն ասելով ինչ կիմանաս:  
 Պ. Մեղանչելով հակամիտութիւն:  
 Հ. Այս աշխարհին վերայ ուրիշ ինչ թշուառութիւն ունեցան:

- Պ. Աստուծոյ երեսէն ընկան, եւ դրախտէն դուրս գուտեցան:  
 Հ. Ի հանդերձեալն ինչպէս թշուառացան:  
 Պ. Արքայութեան դուռը նոցա դէմ՝ փակուեցաւ, եւ դժոխոց գատապարտութեանն արժանացան:  
 Հ. Ադամանց ու Եւայի յանցանքն ու պատիմքները նոցա սերնդոցն եւս անցնն:  
 Պ. Այս ուստի ամէն մարդ նոցա յանցանացը մէջ կծնանի:  
 Հ. Այն յանցանքն ինչ տեսակ մեղք կատաի:  
 Պ. Ադամանց մեղք, կամ Սկզբնական մեղքը:

### ՈՒՍՏ ԹԻ

Խոստումն Մեսիայի:

- Հ. Ադամայ, Եւայի ու նոցա սերնդոցը յոյո չկար Աստուծոյ հետ հաջողուելու:  
 Պ. Ամենեւելին, եթէ Աստուծած չըղործէր նոցա:  
 Հ. Ի՞նչպէս ողղորմեցաւ Աստուծած մարդկանց:  
 Պ. Խոստացաւ որ Փրկիչ մի զրկէ նոցա:  
 Հ. Փրկիչ ատելով ինչ կիմանաս:  
 Պ. Միջնորդ ընդ Աստուծած եւ ընդ մարդիկ, սատանայի գերութենչն զմարդիկ ազատող, նոցա մեղքերն քաւող, Աստուծոյ հետ զիրենք հաշուեցընող, եւ արքայութեան դուներն նոցա առաջը բացող:

Հ. Մարդիկ անպատճառ կարօս էին այսպիսի փրկչի  
կամ միջնորդի գալուն:

Պ. Այս առանց անոր՝ դիւաց պէս Աստուծոյ երե-  
սէն ընկած պիտի մնավին:

Հ. Այս միջնորդը պրափան անձ պիտի լինէր:

Պ. Աստուծ եւ մարդ միանդամայն ապա թէ ոչ,  
կարելի չէր հաստուցումն անել Աստուծոյ՝ մարդկանց  
մեղացը համար:

Հ. Այն փրկին երբ եկաւ աշխարհք:

Պ. Ադամայ մեղանչելէն երկար ժամանակ յետոյ:

Հ. Քանի որ փրկիքը աշխարհք չէր եկած՝ ինչ անուն-  
ներ կուտային մարդիկ իրեն:

Պ. Մարդիկ զանազան անտաներ տուին խոստացեալ  
փրկին, աւելի հուշակուածն էր Մասիս անունն:

Հ. Մեսիային գալէն առաջ մերած ամենայն հո-  
գիներն եւս՝ դատապարտեցնն:

Պ. Ոչ շատ մարդիկ առաջ եւս փրկութեան ար-  
ժանաւոր գործեր գործելով, գալու Մեսիային ար-  
դեմաբըզ համայ եղան Աստուծոյ:

Հ. Այն մերած հոգիները յառաջ քան զգալուստ  
Մեսիային արքայութեան փառաց հասմն:

Պ. Ոչ այլ գոտ Աքքահամու ասուած տեղն աբ-  
գելեալ կային, եւ կապատէն գալուտեան Մեսիային,  
որ արքայութեան փառացը հասցըն զիրենք:

ԴԱՍ Ժ.

Մարդկանց վիճակն ի ստորանեկ աշխարհի միեւն  
ի ցիկնեղոյ:

Հ. Ադամ ու Եւա մեղանչելէն ետեւ ինչ կեանք  
անցուցին:

Պ. Ապաշխարեցին, բայց նոցա ասպաշխարանքը չար-  
չարանօք Մեսիային պիտի լինէր արժանի թողլութեան  
եւ հաճելի Աստուծոյ:

Հ. Մեղանչելէն առաջ զաւոկ ունեցան:

Պ. Ոչ, այլ յետոյ անոր համար է որ ամէն մարդ-  
կամայ մեղօքը կծնանի:

Հ. Ադամայ որդւոց անունն ինչ է:

Պ. Մեք երեքին անտաներն միայն գիտեմք, որ են  
կային, Աբէլ, եւ Սէթ, ուրիշ շատ զաւակներ եւս  
ունեցաւ:

Հ. Ադամայ երեք որդւոցը վարդն ինչպէս էր:

Պ. Կային չար մարդ էր, եւ զիւր Աբէլ եղացըրը  
մեռուց, իսկ Աբէլ եւ Սէթ՝ արդար էին:

Հ. Երեքն եւս զաւոկ ունեցան:

Պ. Կային եւ Սէթ ունեցան, իսկ Աբէլ ոչ:

Հ. Կայինի որդւոց վարդն ինչպէս էր:

Պ. Գրեթէ ամէնքն եւս իրենց հօրը նման չարագործ

էին:

Հ. Սեթայ որդիքն ինչպէս էին:

Պ. Սեթայ ցեղը երկար ժամանակ բարեպաշտ մը-  
նաց, բաց յետոյ այն եւս աւրուեցաւ:

Հ. Խնչէն աւրուեցան:

Պ. Զարերուն հետ խնամութիւն անելով:

Հ. Այն ժամանակներն արդար մարդ ըմնաց աշ-  
խարին երեսն:

Պ. Միայն նոյ նահապետ եւ նորա ընտանիքն կյի-  
շատակուն ինքեւ արդար մարդիկ:

Հ. Ո՞վ էր նոյ:

Պ. Սեթայ ցեղէն աստուածազաշտ եւ երկիւզած  
անձ մի էր:

### ԴԱՍ ԺԱ.

Զրկեղեղին մինչև շրկից ազջի մեռանալն:

Հ. Աստուած անպատիթ թողմեց մարդկանց ապա-  
կանութիւնն:

Պ. Ո՞չ, այլ համոշխարհական ջրհեղեղով պատիեց  
վերնք:

Հ. Ջրհեղեղին ժամանակն ամենայն մարդիկ եւս մե-  
ռան թէ ոչ:

Պ. Ամէնքն այլ մեռան, բաց ի նոյ նահապետէն ու  
նորա ընտանիքն՝ որ բռնըը մէկէն ութ հոգի էին:

Հ. Որմնք էին այն ութ հոգին:

Պ. Նոյ եւ նորա կինը, նոյի երեք որդիքը, եւ նորա  
երեք կանայքը:

Հ. Նոյի երեք որդիւոց անուններն Բնչ Էկն:

Պ. Սեմ, Քամ եւ Յաթեթ:

Հ. Նոյ եւ նորա ընտանիքն Բնչպէս աղատեցան  
Ջրհեղեղին:

Պ. Տապանով, զոր Նոյ նահապետն շննեց Հրամա-  
նան Աստուծոյ:

Հ. Ջրհեղեղին յետոյ մարդիկ ապելի երկիւզած  
եղմն:

Պ. Քիչ ժամանակին դարձեալ չարացան:

Հ. Ի՞նչ էր նոցա աւելի չարանալն:

Պ. Կռապաշտութիւնն անելն:

Հ. Կռապաշտութիւնն Բնչ էր:

Պ. Արարշն տեղ արարածները պաշտել, կամ որ  
նոյն է անստեղծ Արարշն պատիւն ընծայել ստեղ-  
ծական բաներու:

### ԴԱՍ ԺԲ.

Շրկից ազջի մեռանալն:

Հ. Աստուած Բնչ նոր ողորմութիւն ցուցուց ազգի  
մարդկան յետ Ջրհեղեղին:

Պ. Թէեւ թոյլ տուաւ որ նոցա մեծ մասն կռա-  
պաշտութեան մէջ մնայ, բայց ոչ իսպառ անտես

արաւ զմարդիկ, զատ ժողովուրդ մի ընտրեց, որպէս  
զի նորա օրինակով կռապաշտներն եւս իմենց չար

ճանապարհէն դառնան:

Հ. Այն ընտրեալ ժողովութեն մըն էր:  
Պ. Եբայեցիք, որ յետոյ Խսրայելացիք առուեցան,  
եւ մեր լեզուովը Հրեայք:

Հ. Այն ժողովուրդն ինչ կերպիւ Ճեւացաւ:

Պ. Սեմայ ցեղէն Աբրահամ նահապետն զիսահակ  
ծնաւ, իսահակ զՅակոբ, Յակոբ' որ Խսրայէլ եւս  
կասուի, տասուերկու որդի ունեցաւ, որ Խսրայելա-  
ցւոց տասուերկու ցեղից նահապետներն եղան:

Հ. Տասուերկու ցեղից նահապետներուն անուններն  
ասա:

Պ. Ռուբէն, Շմաւոն, Ղեւի, Յուղա, Խսպար, Զա-  
բուղն, Դան, Նեփիտաղիմ, Գաղ, Ասեր, Յովսէփ եւ  
Բինիմին:

Հ. Աստուած ինչ կերպիւ արաւ զԱբրահամ Հայր  
ապդին Հրէից:

Պ. Հայրենիքէն հանեց, հետը ուստ դրաւ եւ հը-  
րամայեց որ նա եւ նորա սերունդն թլիատուին:

### Դ.Ա.Ս Ժ.Գ.

Ասուծոյ Խսրայելացւոց արած բարիիք:

Հ. Աստուած ինչ բարիք եւ ինչ շնորհք արաւ Խս-  
րայելացւոց ապդին:

Պ. Ա. Աբրահամու խոստացաւ որ Մեսիայն նորա  
ցեղէն ծնանի:

Բ, Զանազան հրաշքներով պաշտպանութիւն արաւ  
Խսրայելացւոց:

Գ. Օրէնք տուաւ նոցա' իւր բարեհաճութիւնը  
յաշտնելու համար:

Դ. Աւետեաց երկիրն խոստացաւ, եւ պարգեւեց  
նոցա:

Ե. Հաճեցաւ տաճար մի ունենալ նոցա մէջ:

Զ. Շատ անդամ մարգարէներ յուղարկեց նոցա:  
որ աստուածապաշտութեան մէջ մնան:

Հ. Աստուած ինչ հրաշքներով պաշտպանութիւն  
արաւ Խսրայելացւոց:

Պ. Աստուած արած գլխաւոր հրաշքները սորա են.  
Յովսէփիայ փաւաւորութիւնը, Եգիպտոսի հարուած-  
ները, Կարմիր ծովուն անցքը Անապատի մէջ մանա-  
նայն, Փինձի օծը, Աւետեաց երկիրն տիրապետութիւ-  
նը, Հրէից' երենց թշնամիներուն յաղթելը, եւ սցմ:

Հ. Աստուած որիւ Ճեռքով օրէնք տուաւ Խսրայե-  
լացւոց:

Պ. Մովսէս մարգարէն Ճեռքովը:

Հ. Աստուած ինչ օրէնքներ տուաւ Խսրայելացւոց  
Մովսէսի Ճեռքովը:

Պ. Ա. Տասնաբանեայ պատուիրամքը:

Բ. Զոհից եւ ուրիշ արարողութեանց օրէնքները:

Գ. Արդարութեան եւ դատաստանի կանոնները:

Հ. Տասնաբանեայ պատուիրանքը ինչ կերպով տուաւ  
Աստուած Խսրայելացւոց:

Պ. Երկու քարեղեն տախտակներու վերայ դրուժ:

Հ. Աւետեաց երկիրն նվ ժառանգել տուաւ խրայ-  
ելացնց:

Պ. Յեսու քաջ զօրավարը:

Հ. Աստուծոյ տաճարն հար շինուեցաւ:

Պ. Երաւաղեմ քաղաքը:

Հ. Ո՞չ կանգնեց զայն տաճարը:

Պ. Սողոմն խմասաւն որ Դաւիթ մարդարէի որդին էր:

Հ. Մարդարէներն ինչ մարդիկ էին:

Պ. Արդար եւ սուրբ մարդիկ՝ որ Աստած կրո-  
ղարկէր Խապայելացւոց՝ զանոնք իրաստելու, միմիթարելու  
եւ ապագայ բաներն նոցա գուշակելու համար:

Հ. Նոյն մարդարէնցած բաներուն մէջ գիմասորն  
նոն էր:

Պ. Մեսիային գալստու վալքը, մահը, յարութիւ-  
նը, Հեծեց ազգին անարդուիլու եւ հեթանոսաց դարձը:

Հ. Մարդարէւթիւնները գրի անցուցին ամենքը:

Պ. Ոմանկ անցուցին եւ ոմանկ ոչ:

Հ. Գրաւոր մարդարէնցութիւն ունեցողներուն գլխա-  
ւորներն որմնք էին:

Պ. Մովսէս, Սամուէլ, Դաւիթ, Եսայի, Երեմիայ  
Քարուք, Եղեկել, Ղանիել, եւ Երկոտասան վորքը  
մարդուք:

Հ. Երկոտասան փոքր մարդարէի որմնք են:

Պ. Նոյն որ միւններուն չափ Երկայն գրուածներ  
էն թողած:

Հ. Ասա նոցաւ ամստենիերն:

Պ. Ովզէէ, Յովէլ, Ա.մովս, Ա.մգիու, Ցավանան, Մի-  
քիա, Կաւում, Ա.մքակում, Սոփոնիա, Ա.նդ.Էսա, Զա-  
քարիա եւ Մանղաբիա:

Հ. Գրուածքը չունեցող մարգարէից մէջ գլխաւոր  
ներն որմնիք են:

Պ. Եղիս եւ Եղիսէնու մէջ շաբան մընթից պատ  
ուսուցանչ ուսուց յարդ ուսուց յարդ ուսուց յարդ ուսուց

ԴԱՍ ԺԴԻ

Հ. Խարայելացիք Աստուծոյ իրենց արած բարկը  
ճանաչեցին:

Հ. Խելից ապերահուրիւն:

Հ. Խարայելացիք Բամուծոյ իրենց արած բարկը  
ճանաչեցին:

Պ. ԱՀ. շատ անգամ ապերահուր դատնուեցան Ա.մ-  
տուծոյ դէմ:

Հ. Որինք եղան նոցաւ գլխաւոր ապերահուր թիւն-  
ները:

Պ. Մովիէսի ժամանակ ոսկիի հորթը պաշտեցին,  
եւ անապատին մէջ շատ արտօնանչներ արին. Դատա-  
ւորներուն ատենները կռ.ապաշտից հետ խնամութիւն-  
ներ արին. կռու.ք պաշտեցին. եւ Ա.ստուծոյ կամացը  
դէմ ոտք կտօնեցին որ թագաւոր ունենան. Թագաւոր  
բաց ժամանակ անմիաբանութիւն ու կռապաշտութիւն  
արին. թագաւորութեան դադիրէէն յետոյ Մեսիան  
ուրբացան ու խաչեցին.

Հ. Աստուած Բնչպէս պատժեց Խորայելացւոց ապերախտութիւնները:

Պ. Զանազան ծանր ծանր պատիմներով:

Հ. Մոլուէսի ժամանակ Բնչ պատիմներ ունեցան Խորայելացիք:

Պ. Շատը անապատին մէջ մեռան' առւանց Աւետեաց երկիրն մտնելու, մէկ մասն եւս Աստուծոյ հըրամանաւն այլ եւ այլ հարստածներով պատուհասեցան:

Հ. Դատաւորներն նոլ Են:

Պ. Ցեսուէն յետոյ Խորայելացւոց դատաստանները կտրող, եւ նոցա առաջնորդութիւն անող իշխաններ:

Հ. Աստուած Բնչ պատիմ առւաւ Խորայելացւոց Դատաւորաց ժամանակ:

Պ. Շատ անգամ այլագուեաց ձեռքն մատնեց դիրենք:

Հ. Թագաւորաց ժամանակն Աստուած Բնչ պատիմ առւաւ Հրէից:

Պ. Նոցա թագաւորութիւնն վերցուց, եւ զիրենք գերի տանել առւաւ Ասորենստան եւ Բաբելոն:

Հ. Մեսիայն խաչ հանելուն համար Հրէաներն Բնչ պատիմ առին:

Պ. Նոցա երկիրն աւերակ դարձաւ, տարձարն կործանեցաւ, երենք ցիրուցան եղան, եւ ամէն աղգաց մէջ անարդուեցան:

Հ. Հրեայք միշտ Աստուծոյ երեսէն ընկած պիտի մնան:

Պ. Ոմանք հետ զհետէ դարձի կուգան, բայց բոլոր աղգը աշխարհիս վերջերուն պիտի դառնայ ի քրիստոնէութիւն:

ԴԱՍ ԺԵ.

Մեսիայի գալսենեն առաջ հերանուաց վիճակն:

Հ. Այս աղգերն որ Խորայելացի Հէին՝ Բնչ կասուէին:

Պ. Հեթանոսք:

Հ. Հեթանոսաց անցուցած կետնքն Բնչ էր Աբրահամու կոչմոննէն մինչեւ Մեսիայի գալուատը:

Պ. Մեղք, մոռացութիւն ճշմարտին Աստուծոյ եւ կուպաշութիւն:

Հ. Ամենան հեթանոսք եւս կուամիջան էին:

Պ. Ընդհանրապէս ամէնքն եւս, բայց եղան մասնաւոր ոմանք՝ որ սատուածապաշտ էին, նոցա գործքերըն՝ Խորայելացւոց գործողը պէս համոյ եղան Աստուծոյ, եւ նոքա եւս վախճանեալ համփերն ի գողն Աբրահամու մինչեւ ի գալուատ Մեսիային, ապա նուվաւ արքայութեան փառաց հասան, այսպիսիք են Յավեր եւ Մելքոնեդեկ:

Հ. Այդպիսի մասնաւոր հեթանոսք Բնչ արին որ փրկութեան համնէին:

Պ. ԶԱՍՈՒԱԾ պաշտեցին, Մեսիային սպասեցին, եւ ըստ ուղիղ խղճի մոտաց կեանք անցուցին:

Հ. Ինչմեր համար թոյլ տուաւ Աստուած, որ Հբեայք  
Մեսիայի գալէն տուաջ այնպէս աւրուին:

Պ. Որպէս զի հաւականան մարդիկ իրենց ակարու-  
թիւնն ու խեղճութիւնը, եւ փափաքին Մեսիայի գա-  
լուն, որ ապատին այն թշուառ վիճակէն:

### ԴԱՍ Ժ.՝

Դալուս Մեսիային, Մարդեղութիւն Որդուն  
Աստուծոյ.

Հ. Մեսիայն եկմած է թէ ոչ:

Պ. Եկած է մարդարէից գուշակած ժամանակին:

Հ. Ո՞վ է Մեսիայն:

Պ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Հ. Յիսուս Քրիստոս ո՞վ է:

Պ. Որդին Աստուծոյ մարդացեալ, այսինքն Ամենա-  
սուրբ Երրորդութեան Երկրորդ անձը:

Հ. Ուրեմն Աստուծոյ Որդին մարդ եղմու:

Պ. Այն այնչափ սիրեց Աստուծ: զմարդիկ, որ մեզ  
համար մարդ եղաւ:

Հ. Որդին Աստուծոյ մարդ եղաւ ասելով ինչ կը-  
հասկանաս:

Պ. Այս Կհասկանամ, որ մեր մարմնայն նման մար-  
մին առաւ հանդերձ մարդկամին հոգւով:

Հ. Ուստի առաւ մարմին:

Պ. Խսրոյ կուսէն Մարդիամայ, որ էր ի ցեղէն Ցու-  
դայ եւ յազդէ Գաւթի:

Հ. Որդւոյն Աստուծոյ մարդեղութեան խորհուրդն  
ինչպէս կատարուեցաւ:

Պ. Զօրութեամբ չոգւոյն սրբոյ:

### ԴԱՍ Ժ.՝

Աստուծութիւն և մարդկութիւն Քրիստոսի:

Հ. Քրիստոս Տէրն մեր Աստուծոյ է:

Պ. Այն, վասն զի Որդի Աստուծոյ է, երկրորդ  
անձն ամենասուրբ Երրորդութեան:

Հ. Քրիստոս Տէրն մեր ճշմարիտ մնորդ է:

Պ. Այն, վասն զի մեր մարմնայն նման մարմին ունի  
ի կուսական արենէն կալմեալ, եւ մեր հոգւոյն նման  
հոգի ունի յԱստուծոյ ստեղծեալ:

Հ. Աստուծութիւնն ու մարդկութիւնն ի Քրիստոս  
ինչ կերպել կդաւանիմր:

Պ. Անշփոթ, անայլայելի եւ անբաժանելի միաւո-  
րեալ ի միաւմ անձնաւորութեան կամ ի միում անձին:

Հ. Այն անձը նրն է:

Պ. Անձն Որդւոյն Աստուծոյ:

Հ. Աստուծութիւնն ու մարդկութիւնն ինչ կասուի:

Պ. Բնութիւն, որ ի մեզ Երբեմն նաեւ Անձն կնշա-  
նակէ:

Հ. Մի բնութիւն է ի Քրիստոս, թէ երկու:

Պ. Մե կամ միաւորեալ բնութիւն կդաւանիմք և  
Քրիստոս' ընդդէմ չարաչար բաժանողաց զմի Քրիս-  
տոս. եւ երկու բնութիւն կդաւանիմք ընդդէմ նոցա  
որ աստուածութիւնն ու մարդկութիւնը շփոթեալ  
ասին ի Քրիստոս:

Հ. Կարելի է ասել թէ երկու անձն ունի Քրիստոս:

Պ. Ոչ երբէք. վասն զի մի միայն է Քրիստոս Որ-  
դին Աստուծոյ, եւ նոյն որդի կուսին, կատարեալ  
Աստուած եւ կատարեալ մարդ:

Հ. Քրիստոս Տէրն մեր հայր ունի:

Պ. Ըստ մարդկութեան հայր ըռնի, վասն զի և  
կուսէ ծնաւ. իսկ ըստ աստուածութեան՝ միածին Որ-  
դի է Հօր Աստուծոյ:

Հ. Սուրբ կոյսը Աստուածածին կամ Մայր Աս-  
տուծոյ կարելի է ասել:

Պ. Այու ամենայն իրաք. վասն զի նորա ծնած Որ-  
դին Աստուած էր:

### ԴԱՍ ՃԲ.

Ենունի, Մամկուրին եւ Վարժ Յիսուսի.

Հ. Քրիստոս Տէրն մեր նրչափ ժամանակ երկրիս  
վերայ ըրջեցաւ:

Պ. Գրեթէ երեսուն եւ երեք տարի:

Հ. Ուր ծնաւ:

Պ. Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքն այրի մի մէջ:

Հ. Ուր օր ծնաւ:

Պ. Յունուարի 6 - ին, որպէս կտօնէ մեր սուրբ Եր-  
կեղեցին եւ կտօնէր ատենով Յունաց Եկեղեցին եւս  
մինչեւ Ոսկեթերան հայրապետին մօտ ժամանակները.  
յետոյ Յոյնք Լատինացոց հետեւելով և կամ կատարել  
դեկտեմբերի 25 - ին, բայց Հայք ուրիշ հին ծէսերուն  
հետ այս եւս անփոփոխ պահեցին մինչեւ ցայսօր:

Հ. Քրիստոսի ծննդեան ժամանակ Բնէն նոր բան  
պատահեցաւ:

Պ. Հրեշտակներն երեւեցան հովուաց եւ վառա-  
բանեցին զԱստուած. նոր աստղ երեւեցաւ, Մոգեր  
Եկան հեռուու տեղերէ՛ Յիսուսի երկրպագութեան ա-  
նելու, Հերովդէս թագաւորն Բեթղեհէմի անմեղ  
մանկունքը կատորեց:

Հ. Յիսուսի մանկութեան ժամանակ պատահած  
նշանաւոր անցքերն ողինք են:

Պ. Ութօրեայ թլփատութիւնը, քառամօրեայ գա-  
լուստն ի տաճարն, յլգիպտոս փախչեը, ի տաճարին  
վարդպապետելը:

Հ. Քրիստոս Տէրն մեր իւր երկրաւոր կեանքն Բնէ-  
պէս անցուց:

Պ. Երեսուն տարիի չափ մօք եւ սրբոյն Յովլսեփայ  
մօտ կեցաւ. Երեք տարի ու քանի մի ամիս անցուց  
Աւետարանը քարոզելու, եւ իւր Եկեղեցին հաստա-  
տելու:

Հ. Սուրբն Յովէփի նվ էր:

Պ. Դաւթի ցեղեն արտօնատաւր մի էք եւ սուրբ  
Աստուածածին նորա հետ նշանուած էք:

Հ. Նորս պաշտօնն ինչ եղաւ:

Պ. Խնամիկալ եւ պաշտպան լինել սուրբ Աս-  
տուածածնայ, եւ Հայրագիր Քրիստոսի Տեառն մերը:

Հ. Քրիստոսի Տեառն մերոյ անական կեամբն ինչ-  
պէս էք:

Պ. Աղքատութեամբ եւ աշխատութեամբ, եւ յա-  
մենայնի հնազանդ էք սուրբ Աստուածածնին եւ  
սրբոյն Յովկեփայ. ուրիշ բան չգիտեմք Յիշուսի  
մանկութեան վերայ:

Հ. Խնջին կամեցաւ Յիշուս աղքատութեամբ եւ  
աշխատութեամբ ատքիւ:

Պ. Ուսկէս զի մեզ սովորեցնէ Հարստութիւնն ար-  
համարհել, գտառարկութենէ ու փառասիրութենէ  
փափշիւ, գործունեայ ու չարքաշ կեամք անցունել:

Հ. Խնջին կամեցաւ հնազանդ ու Հպատակ լինել  
սուրբ Աստուածածնին եւ սրբոյն Յովկեփայ:

Պ. Ուսկէս զի ամենայն մարդիկ խոնարհութիւն սով-  
որին իսկէ, եւ տղայք իրենց ծնողացը հնազանդ լինին:

**ՊԱՍ ԺԹ.**  
Միշտուրիմ, պահի և փորձուրիմ Քրիստոսի:

Հ. Երեսուն ասթեկան եղած ժամանակն Քրիստոս  
Տէրն մեր ինչ արաւ:

Պ. Կամեցաւ որ Յովկամնէս Մկրտիչ զինքն մկրտէ:

Հ. Ո՞վ էք Յովկամնէս Մկրտիչ:

Պ. Մարդարքից մէջ ամենէն մեծն ու սուրբ մարդ.

Աստուած յուկարկեց զինքն որ Հրեաները Մեռիային

գալստեանը պատրաստէ. անոր Համար Կարապէտ՝  
այսինքն առէւեւն եկող եւս կասուի:

Հ. Ի՞նչ կերպիւ ուարաստեց նա Հրեաները:

Պ. Խըր բարի վարուց օրինակվն, խրատներով եւ  
մկրտութիւն անելով:

Հ. Յովկամնէս կարապէտի մկրտութիւնն ինչ բան

էր:

Պ. Բարեպաշտական արարողութիւն մի, որով Հրեայք  
Հրապարակական ապաշխարութիւն կատարած կլինէն:

Հ. Այն մկրտութեամբ մեղաց թողութիւն կլինէր:

Պ. Ո՞չ. բայց անով պատրաստ կլինէր մեղաքըն՝  
թողութիւն մեղաց ընդունելու և Քրիստոսէ:

Հ. Քրիստոս Տէրն մեր ինջն համար կամեցաւ Յով-

կանուն Մկրտչի մկրտութիւնն ընդունիլ:

Պ. Կախ՝ մարդկանց խոնարհութեան եւ ապաշխա-  
րութեան օրինակ տալու համար, Երկրորդ՝ մկրտու-  
թեան ջուրը սրբագործելու համար:

Հ. Մկրտութիւնէն յետոյ ինչ արաւ Տէրն մեր:

Պ. Քանասուն օր՝ գատասուն գիշեր պահք պա-  
հեց, այսինքն ծով կեցաւ անապատին մէջ, այսու-  
հետեւ թոյլ տուաւ որ սատանան քովը մօտենայ եւ

փորձէ զինքն:

Հ. Ինչիւ թոյլ տուաւ Քրիստոս որ սատանամ դին-քըն փորձէ:

Պ. Որպէս զի խմացընէ թէ ինքն եւս մեզ նման մարդ է, եւ որպէս զի օրինակ տայ մեզ՝ իւր շնորհածն սատանայի փոքութեանցն յաղթելու:

### ԴԱՍ Ի.

Ընթացութիւն Առաջելոց յարդութիւն Քրիստոսի:

Հ. Անապատէն որ գարձաւ' բնէ արաւ Քրիստոս Տէրն մեր:

Պ. Աշակերտներ առաւ իրեն մօտ, նոցա մէջէն ընտրեց տասներկու հոգի, որոց անունը յետոյ Առաքեաւ դրաւ:

Հ. Ինչիւ համար առաքեաչ անունն տուաւ տասներկուքին:

Պ. Վասն զի Յիսուս ափտի յուղարկէր զիրենք բոլըր աշխարհք' զմարդիկ գարձի բերելու եւ Քրիստոնեայ անելու:

Հ. Առաքելոց մէջ մեծն նվ էր:

Պ. Քրիստոս Տէրն մեր չկամեցաւ որ առաքելոց մէջ մեծ գոյնուի ուրիշներուն հրամայոլ:

Հ. Քրիստոսի Տեառն մերոյ պաշտօնն ու գործն բնէ եղաւ:

Պ. Ճշմարտութիւն քարոզել, ու փրկութեան ճանապարհը մարդկանց սովորեցնել. ցուցընել նոցա թէ

ինքն է Մեսիան, եւ հաշտեցընել զնոսա Աստուծոյ հետ:

Հ. Գլխաւորապէս բնէ սովորեցուց Քրիստոս մարդկանց իւր քարոզութեանցը մէջ:

Պ. Յաշխարհէ հեռանալ սրտով, եւ առ Աստուծութերք ենալ:

Հ. Սրտով յաշխարհէ հեռանալն բնէ է:

Պ. Հեռու մնալ ի հապարտութենէ, ի հեշտասիրութենէ եւ յագահութենէ:

Հ. Առ Աստուծութենալն բնէ է:

Պ. ՅԱստուծութենայն հաւատաւ եւ յուսաւ, զԱստուծութենայն կերեւ ի վեր քան զամենայն, եւ ամէն բան Աստուծոյ փառացը համար անել:

Հ. Քրիստոս բնչակէս հասկացուց մարդկանց թէ իւրեն է Մեսիայն:

Պ. Ասով որ հին օրինաց մէջի մարդարէութիւններն իւր վերայ կատարեց, հրաշքներ գործեց, մեռաւ ու յարութիւն առաւ:

### ԴԱՍ Ի.Ա.

Մահ Քրիստոսի Տեառն մերոյ:

Հ. Քրիստոս բնէ կերպիւ հաշտեցուց զմարդիկ Աստուծոյ հետ:

Պ. Մեռնելով իբրեւ մարդ՝ մեր մեղաց քաւութեան համար:

Հ. Քրիստոս ամենանշյան մարդկանց համար մեռաւ,  
թէ միայն ունանց համար:

Պ. Քրիստոս Տէրն մեր ամենայն մարդկանց համար իւլ  
սուբբ արիւնը թափեց, եւ ամենուն համար մեռ աւ,

Հ. Փրկութեան համելու համար՝ Քրիստոսի Տեառն  
մերոյ մեզ համար մեւնին պաւակն է:

Պ. Բաւական կլինիկ եթէ մեք եւս հաւատարիմ գտնածւմբ պյա չարհաց, որ պատու է մըջնորդութեանն Քրիստոսի եւ ընդ Հօր Աստուծոյ հաւառութեան:

Հ. Քրիստոս Տէրն մեր խնչակն մեզ աւ.

Պ. Խաչի վերայ, որ այն ժամանակներն ամենէն անարդ ու ամենէն աւելի տաճնֆանու տառը բաշխ էր:

#### Հ. Ա՞յլ մերժութեան պահանջումնեան

Պ. ինքն կամաւորապէս մեռաւ մեզի համար, այս լնդն թուղ տուաւ որ Հրեայք հեթանոսաց ձեռքով պինդն ի մահ գատապարտեն ու խաչ հանեն:

Հ. Հրեայք ինչու ի մահ դատապարտել տուին ըղ-  
Քրիստոս:

Պ. Խենց կարդացուղիքէն ու քահանայսապեանքէն գրգռուտելավ. վասն զի քրիստոս շատ անդամ նոցա կերպաւորութիւնն ու անսանընեղո ի անս խօսնէր.

Հ. Հրէեց Քրիստոսի հետ այսպէս վարուիլն առաջուց գուշակումծ էու.

Պ. Այս հին մարդարէք բաց կերպիւ գուշակելէն, եւ ինըն Քրիստոս իւր մահուանին շատ ժամանակ առաջ մարդարէցացել եւ ասել էր:

Տ. ՕՐԻՒՍՈՒ ի մահ դատապարսողն նԱԼ եղաւ:

Պ. Պոնտացին Պիղատոս, որ Հռովմայեցւոց կողմանէ  
չէսասամի ուստաւոր կամ կուսակալ էք:

• 100 90 մերակ քրիստոս.

Պ. Ուրբաթ օր մի կէսօրուան մօտ խաջուեցաւ,  
ու եռեր ժամեն Հօդին աւանդեց:

Հ. Քիստոսի մեռած օրն ինչ մասնաւոր անուն  
անկանությունը

#### **О: Установка**

Հ. Քրիստոս Տէղն մեր հոգին աւանդած ժամանակ  
եւբանի ո կը ո Օռակ Աստվածայ մինելն:

Պ. Այս Որդի Աստուծոյ լինելն համկացուց թէ  
չարչարանացը եւ թէ մեռած ժամանակն արած հը-  
ռաշքներով:

ԴԱՎԻԳ

Քրիստով հոգույն և դժոխա իշխելը և մարմանը  
բաղուիլը.

Հ. Քըստոս Տէղն մեր մեռաւ ասելով ինչ կլիմա-

Պ. Կիմանալը որ Քրիստոսի Հոգին մարմնէն բա-  
խճառ եղաւ.

Հ. Աստուածութիւնն եւս բաժանուեցաւ մարմնէն օքանու մարմնէն եւ թէ Տառիէն անբա-

Ժամերի մնաց՝ հօգու լին մղնմակառաջ ու Ա

Հ. Քրիստոսի հոգին մարմնէն որ բաժանուեցաւ,  
Բնէ եղաւ:

Պ. Եջ ի գժոխս, պյախնըն այն տեղ՝ ուր էին Քրիս-  
տոսի գալստենէն առաջ աշխարհք եկած ու վախ-  
ճանած արդարներն:

Հ. Ինչիւ իջաւ Քրիստոս ի գժոխս:

Պ. Արդարոց հոգիներն անտի համելու, եւ իւր  
հետ երկինք տանելու համար:

Հ. Քրիստոսի Տեառն մերոյ մեռնելէն յետոյ մար-  
մինն Բնէ արին:

Պ. Զինուոր մի տէգով խոցեց նորա կողը, եւ ան-  
տի արին ու ջուր ելաւ:

Հ. Քրիստոսի մեռնելէն յետոյ մարմինն երկար  
մնաց խաչին վերապի:

Պ. Իրիկուան գէմ խաչէն վար առնուեցաւ:

Հ. Քրիստոսի մարմինը խաչէն վար առնելէն յետոյ  
Բնէ արին:

Պ. Մաքուր կտաւով եւ անուշահոտ խոնկերով  
պատեցին ու ժայռի մէջ փորուած նոր գերեզմանի  
մէջ թաղեցին:

Հ. Քրիստոսի Տեառն մերոյ մարմինը գերեզման  
դնելէն յետոյ Բնէ արին:

Պ. Գերեզմանին գուռը մեծ քարով փակեցին, գե-  
րեզմանին վերայ կնիք զարկին, ու պահպանութեան  
համար քովը զինուորներ դրին:

Հ. Այս գգուշութիւններն Բնէ բանի համար էին:

Պ. Հրէեց աղաճանկովը հրաման տուաւ Պիղատոս  
այն գգուշութիւններն անելու, որ Քրիստոսի մարմինը  
չգողցուի բայց Աստուած կամեցաւ անով Քրիստոսի  
յարութիւնն աւելի եւս անտարակուաելի անել:

### ԴԱՍ ԻԳ.

Յարութիւն Քրիստոսի:

Հ. Քրիստոսի մարմինն երկար մնաց ի գերեզմանին,  
Պ. Ո՛չ. Քրիստոս Տէրն մեր յարութիւն առւաւ, ու  
մեռնելուն երրորդ օրը փառաւորապէս դուրս ելաւ  
գերեզմանէն:

Հ. Յարութիւն առւաւ ասելով Բնէ կիմանաս:

Պ. Այս կիմանաս որ Քրիստոսի հոգին մարմնոյն  
հետ նորէն միացաւ:

Հ. Ի՞նչպէս դուրս ելաւ գերեզմանէն:

Պ. Լուսապայծառ կերպիւ, առանց գերեզմանին  
դասնը բացուելուն կարօս լինելու:

Հ. Ինչիւ կասես՝ թէ երրորդ օրն յարեաւ Քրիստոս:

Պ. Վասն զի ուրբաթ կէսօրէն յետոյ մեռաւ, եւ  
կիրակի առաւաօտ կանաւի յարեաւ:

Հ. Քրիստոսի յարութեան օրն Բնէ մասնաւոր ա-  
նուն ունի:

Պ. Զատիկի, եւ ուրիշ աղդաց մէջ Պասէք կամ  
Պասքա:

Հ. Գերեզմանին պահպաններն աքրսութիւն յալութեան վկայ եղմն։

Հ, Ուրեմն սւստի իմացուեցաւ Քվիոտոսի յարութիւն առնելին:

Պ. Այս մարդկանց վկայութենէն՝ որոց Քրիստոս յարութենէն յետոյ երեւեցաւ, նոցա հետ կերպաւ ու խմեց:

Հ. Քրիստոսի յարութենէն յետոյ զինքն տեսնող  
վկաք շատւհո էին:

¶. Քրիստոս Տէքն մեր յարտվիւն առնելէն յետո  
երեւեցաւ Խւզաբեր սուրբ կանանց, շատ անդամ ա-  
ռաքելոց եւ միւս աշխարհաց, եւ միանդամ հնագ-  
հարիւր հոգեւու ի միասին:

Հ. Նոցա վկայութիւնն ստիգ. է:  
Պ. Ամենեւին տարակս չվերցըներ. վասն զի նոքա  
ամէնքն եւս իրենց վկայութիւնն հաստատելու հա-  
մար իրենց կեանքն դրին, արիւներն թափեցին, իրենց  
արած հրաշքներամբն այս ճշմարտութիւնս հաստատե-  
ցին, ու բոլոր աշխարհս դարձուցին և հաւասս Քրիս-  
տոսի:

ԳԱՐԱԿԱՆԻ ՏԱՐԱԾՈՒՅԹ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՅԹ

Համբարձումի Քրիստոփի:

Հ, Քրիստոս Տէրն մեր յարաթիւն առնելէն յերտոց  
երկար մնաց աշխարհին վերապէ:

Պ, Քառասուն օր կեցաւ, եւ այն միջոցին շատ  
անդամ երեւեցաւ առաքելոց ու խրամներ տուաւ  
նոցա:

Հ, Քառասուներորդ օրն ընչ արաւ:

Պ, Քառասուներորդ օրն առաքելոց տչքին առաջը  
երկնք երւաւ:

Հ, Այժմ ընչ կերպով է Քրիստոս յերկինս:

Պ, Ծատեալ ընդ աջմէ չօր Աստուծոյ:

Հ, Ինչն համար նստեալ կասուի:

Պ, Որպէս զի հասկացուի թէ երկինքն նորա վա-  
ռաց եւ յաւիտենական հանգատեան տեղն է:

Հ, Ընդ աջմէ Աստուծոյ ինչն կասուի:

Պ, Որպէս զի հասկացուի թէ իբրև Աստուծոյ՝ հա-  
ւասար է չօր, եւ իբրև մարդ՝ ի վերոյ է քան զա-  
մենան արարած:

Հ, Քրիստոս Տէրն մեր միայնակ մոռաւ յերկինս:

Պ, Հետո տարաւ յերկինս մինչեւ այն ժամանակ  
մեռած արգարոց հոգիներն, որ առանց նորա Տէրն  
կարող յերկինս մտնել:

Հ, Ուրեմն Քրիստոս Տէրն մեր իշ եւս է երկրիս  
վերապէ:

Պ. Զգալի կերպեւ, այսինքն այն համարնական եղանակաւ՝ որով ի մարդեղութեանն երկիս վերաց էր, այսպէս չէ այժմ յերկի, բայց իւր շնորհօքն եւ հոգելովը միշտ սուրբ Եկեղեցւոյ հետ է, եւ խորհրդաբար ի սուրբ Հաղորդութեան է:

Հ. Քրիստո Տէրն մեր յերկին թնջ բարիք կանէ մեզի.

Պ. Իմքն մեր Փաստաբան, Միջնորդ ու Քահանայապետն է, եւ Հօր Աստուծոյ կրնծասէ իրեն մեզ Համար Թափած արիւնը,

Հ. Մեր պարտան թնջ է առ Քրիստոն:

Պ. Զինքն պաշտել, սիրել, երախտիքը ճանաչել, եւ ոչ երբէք մոռնալ որ նա է մեր Տէրն ու Թափաւորը, մեր հովիւն ու վարդապետը, մեր օրինակն ու առաջնորդը, մեր բարեխօսն ու քահանայապետը, այս աշխարհին մէջ մեր միակ միսիթարութիւնը եւ անդին մեր յաւիտենական վարձը:

## ՊԱՍ ԻԵ.

Գալուստ Հոգույն սրբոյ, յարողութիւն Աւետարանին ի մեռն առավելոց:

Հ. Քրիստոսի Համբառնաւէն յետոյ առաքեալք թնջ եղան:

Պ. Ամէնքն ի միասին յշրուտաղէմ քաշուեցան, ու սպասեցին որ Հոգին սուրբ իջնի նոցա վերաց, թնջաս որ Քրիստոս խոստացել էր:

Հ. Ե՞րբ յուղարկեց Քրիստոս զՀոգին սուրբ առաքելոց վերայ:

Պ. Իւր համբարձմանէն տասն օր յետոյ, Պենտեկոստէին օրը, կէսօրուանէ Երեք ժամ առաջ.

Հ. Հոգին սուրբ թնջ փոփոխութիւն արաւ տռաքելոց վերայ:

Պ. Զիրենք նոր մարդիկ արաւ, մազերն իմաստութեամբ՝ սրտերն Աստուծոյ սրբովը լեցուց, ու այլ եւ այլ լեզուներ խօսելու եւ Հրաշներ գործելու շնորհք տուաւ նոցա:

Հ. Հոգւոյն սրբայ գալստենէն յետոյ թնջ արին առաքեալք:

Պ. Սուրբ Աւետարանն քարողեցին նախ Հըէեց, եւ ապա հեթանոսաց, թնջաս որ Քրիստոս իրենց պատուիրել էր:

Հ. Աւետարանն թնջ ասել է:

Պ. Աւետարանը լուր կամ աւետիս տուող բան ասել է:

Հ. Առաքեալք մարդկանց թնջ աւետիս տուին:

Պ. Այս աւետիսը տուին որ Աստուծոյ Քրիստոսի Տեառն մերոյ Ճեռքավ հաշոտեցաւ նոցա հետ:

Հ. Հրեայք առաքելոց քարողութեամբն դարձեկան:

Պ. Դարձի եկող շատ եղաւ նոցա մէջ, բայց աղդին մէջ մասն անդաբ մնաց:

Հ. Անդարձ մնացողներուն Աստուած Բնչ պատիժ  
տուաւ:

Պ. Նոցա քաղաքն ու տաճարն կործանեցան, եւ  
երենք բոլոր աշխարհք ցուեցան:

### ԴԱՍ ԻՉ.

Քրիսոնիական հաւառոյ հաւատուիլը:

Հ. Հեթանոսաց մէջ Հրեաներէն աւելի եղաւ Աւե-  
տարանն ընդունու:

Պ. Ո.յ., այնպէս որ գլութէ բոլզ աշխարհս ի կու-  
պաշտութենէ ի քրիստոնէութիւն դարձաւ:

Հ. Հեթանոսաց դարձն դիւրսութեամբ եղաւ:

Պ. Ո.չ., այս մեծամեծ հրաշքներով, ու տէրու-  
թեանց կողմանէ անհնարին բռնութիւններ լինելով  
քրիստոնէութեան դէմ:

Հ. Քրիստոնէութեան դէմ այն հալածանքներն  
հանդին նվ էր:

Պ. Սատանան, որ չէր կամենար մարդկանց իւր  
բռնութենէն ազատիլը:

Հ. Ինչէն յաղթուեցաւ սատանան:

Պ. Քրիստոնէից սրբութենէն եւ անյաղթելի արիս-  
թենէն, որով երենց հաւատքին համար աներկիւղ  
քաջութեամբ կմեռնէն:

Հ. Երենց հաւատքին համար մեռնող քրիստոնեա-  
ներն Բնչ կաստին:

Պ. Մարտիրոս՝ պյամիքն վկայ, եւ նահատակ:

Հ. Ինչն համար վկայ ասուեցան:

Պ. Վասն զի իրենց մահուամբն վկայութիւն տուած-  
են ծշմարտութեան եւ Քրիստոսի աստուածութեան:

Հ. Հեթանոսաց դարձն միայն առաքելոց ձեռքազն  
եղաւ:

Պ. Ո.չ. այլ նաև նոցա յաջորդներաւն ձեռքովը:

Հ. Հոգին սուրբ միայն առաքելոց ու նոցա յաջոր-  
դոցը համար առաքեցաւ:

Պ. Ո.չ., այլ նոցա ձեռօրն ամենայն հաւատացելոց  
եւս արտեցաւ:

Հ. Առաքելոց եւ նոցա յաջորդներն Բնչ զի՞ն սուրբն  
հաւատացելոց զՀոգին սուրբ:

Պ. Ի ձեռն մկրտութեան եւ այլոց սուրբ խոր-  
հըստոց:

Հ. Քրիստոսի հաւատացողներն ու մկրտուղներն  
ինչ ասուեցան:

Պ. Քրիստոնէայ:

### ԴԱՍ ԻՒ.

#### Եկեղեցի:

Հ. Քրիստոնէից ժողովն կամ բազմութիւնն Բնչ  
ասուեցաւ:

Պ. Եկեղեցի քրիստոնէից:

Հ. Եկեղեցի բառն Բնչ ասել է, եւ Բնչ կնշանակէ:

Պ. Ճողով կամ հաւաքումն տաել է, կիշանակէն նաև ժողովարան, այսինքն ժողովելու տեղ:

Հ. Եկեղեցին ընդհանրապէս ինչ բան է:

Պ. Եկեղեցի կասուփ ընդհանրապէս հաւատացելոց ժողովն՝ իբրեւ մի մարմնին, որոյ գլուխն Քրիստոս է:

Հ. Այս հաւատացելոց ժողովն հին է թէ նոր բան:

Պ. Խազբանէ աշխարհի կայ ու յափտեան պիտի մնայ:

Հ. Հրեշտակաց եւ սրբոց Եկեղեցին կամ ժողովն ինչ կասուփ:

Պ. Ցաղթական Եկեղեցի, որ Անդրանկաց Եկեղեցի եւս կասուփ՝ յանուն անդրանիկ եղբարց մերոց հրեշտակաց:

Հ. Երկրիս վերայ եղած հաւատացելոց Եկեղեցին ինչ կասուփ:

Պ. Զինուորեալ Եկեղեցի:

Հ. Զինուորեալ Եկեղեցի ստուելուն պատճառն ինչ է,

Պ. Վասն զի անդադար պատերօգմի մէջ է ընդդէմ դիւաց եւ ախտից եւ մեղաւորաց:

## ԴԱՍ Ի՛Ը.

### Անդամի Եկեղեցւոյ:

Հ. Ամէն մարդ եւս անդամ է Եկեղեցւոյ:

Պ. Ամէն մարդ եւս ստեղծուած է Եկեղեցւոյ անդամ լինելու համար, բայց ամէնքն եւս չեն եղած:

Հ. Ինչնու համար ամէն մարդ եւս անդամ է Եկեղեցւոյ:

Պ. Վասն զի ամէնքը մկրտութիւն չունին՝ որ կարենային Եկեղեցւոյ անդամ լինել:

Հ. Ուրեմն մկրտութիւն ունեցողներն ամէնքն եւս անդամք են Եկեղեցւոյ:

Պ. Այս, միայն թէ իրենք զիրենք յԵկեղեցւոյ կըտրած չլինին, կամ Եկեղեցին զնոսա իւր մարմնէն կորած ձգած չլինի:

Հ. Իրենք զիրենք Եկեղեցին կտրոցներն որո՞նք են:

Պ. Հերետիկոսք, հերձուածողք եւ ուրացողք:

Հ. Եկեղեցւոյն իրմէ կորած դուրս ձգածներն որո՞նք կլինին:

Պ. Նզովեալ կամ բանդրեալ քրիստոնեաներն:

Հ. Մահուչափ մերօք Աստուծոյ ատելի եղած քրիստոնեայք եւս անդամ են Եկեղեցւոյ:

Պ. Այս, բայց մեռեալ անդամք:

Հ. Ուրեմն երկրիս վերայ գտնուող Եկեղեցին ճիշդ սահմանաւ ինչ է:

Պ. Եկեղեցին է ժողով այն հաւատացեալ քրիստոնէից, որ մի եւ նոյն հաւատացեալ առինաւոր առաջնորդներու ձեւուօք կկառավարին:

Հ. Օրինաւոր առաջնորդներ որո՞նք են:

Պ. Եպիսկոպոսք, եւ նոցա իշխանութեանը ներգետ գտնուող քահանայք:

Հ. Եպիսկոպոսունք եւ քահանաց ինչն օրինաւոր առաջնորդք են Եկեղեցւոյ:

Պ. Աման զի յաջորդք են առաքելոց եւ աշակերտացն Քրիստոսի:

Հ. Եպիսկոպոսաց մէջ ամենէն մեծն նրն է:

Պ. Ամենայն Եկեղեցիք քրիստոնէից իրենց մի մի գլուխոր Եպիսկոպոս ունին, որ այն Եկեղեցւոյն միւս Եպիսկոպոսացը մէջ մեծն է, եւ նոյն վերսոց իրաւասութիւն ունի, ուստի կասուի Պատրիարք, կամ Պապ, կամ Կաթողիկոս:

Հ. Պատրիարքաց մէջ ամենէն մեծը կմը թէ ոչ:

Պ. Պատրիարքներն իշխանութեան եւ աստիճանի կողմանէ ամէնքն եւս հաւասար են իրարու, ինչպէս որ սուրբ առաքելաք եւս հաւասար էն, եւ իրաքանչյուրը նոյն իրաւասութիւնն ունի իրեն սեպհականեալ հօտին կամ հովուաց վերպա, միայն արտաքին պատճառներով՝ այսինքն ըստ աշխարհի հանդամանաց մին քան զմիւն նախապատիւ կարող է համարուի:

Հ. Պատրիարքաց մէջ նախապատութեան կողմանէ ինչ կարգ կայ:

Պ. Նախապատութեան կողմանէ առաջին համարած էր Հռովմայ պատգ' միայն իբրեւ կայսերանիստ մայրաքաղաքի հայրապետ, եւ գլուխ արեւմուտեան Եկեղեցւոյ: Երբ որ Կաստանդնուպոլիս Երկրորդ Հռովմանում անուանեցաւ, նորա Յոյն Պատրիարքն Երկրորդ համարուեցաւ, որով եղաւ Աղեքսանդրիս հայրապետը

Երրորդ, Անտիոքայ Հայրապետը՝ Զորբարդ, եւ Կրուսաղեմայ յոյն Պատրիարքը Հինգերորդ:

Հ. Մեր Կաթուղիկոսն իշխանութիւնը եւ նախապատութիւնը նրչափ է:

Պ. Նախապատութեան կողմանէ Պատրիարքաց մէջ Վեցերորդն է: իսկ իշխանութիւնն ու աստիճանը՝ նոցա հաւասար, ու Հայաստանեաց սուրբ Եկեղեցւոյ բացարձակ Գլուխ, այնպէս որ իրեն է սեպհականեալ իրաւասութիւնն ի վերայ ամենայն Հայազգեաց, թէ հովուաց եւ թէ հովուեցւոց:

Հ. Ուրեմն ընդհանուր Եկեղեցւոյ գլուխն նվ է:

Պ. Ընդհանուր Եկեղեցւոյ գլուխն է Քրիստոս, եւ ամենայն պատրիարքներն ու Եպիսկոպոները փոխանորդք են Քրիստոսի:

Հ. Ինչն համար Քրիստոս է գլուխ Եկեղեցւոյ:

Պ. Վասն զի նա է զի Եկեղեցին կառավարողը աներեւոյթ կերպիւ:

### ԴԱՍ ԻԹ.

Նշանի ճշմարիս Եկեղեցւոյ:

Հ. Զինուորեալ Եկեղեցին Քրիստոսի տեսանելի ժողով է թէ աներեւոյթ:

Պ. Տեսանելի է, ու քանի մի նշաններ եւս կամ որովք սովորաբար կճանչյուի թէ նրն է Տշմարիս Եկեղեցին:

Հ. Ուրեմնք են այդ նշաններն:

Պ. Այս չորսն. Միութիւն, Սրբութիւն, Ընդհանրականութիւն եւ Առաքելականութիւն. ուստի ճշմարիտ Եկեղեցին Քրիստոսի հասուի Մի, Սուրբ, Ընդհանրական (կամ Կաթոլիկէ) եւ Առաքելական:

Հ. Եկեղեցին ինչու համար Մի միայն է:

Պ. Վասն զի մի եւ նոյն հաւատքը, մի եւ նոյն յոյսը, մի եւ նոյն հոգին, մի եւ նոյն խորհուրդները, եւ մի եւ նոյն աներեւոյթ գլուխն ունի՞ որ է Քրիստոս Տէրն մեր:

Հ. Եկեղեցին ինչու համար Սուրբ կասուի:

Պ. Վասն զի նորա գլուխն Քրիստոս սուրբ է եւ Սրբութիւն սրբոց, անդամներն սուրբ են, կամ ի սրբութիւն կանչուած, եւ վարդապետութիւնն ու խորհուրդները սուրբ են:

Հ. Եկեղեցին Ընդհանրական կամ Կաթոլիկէ ինչու կասուի:

Պ. Վասն զի իւր վարդապետութիւնն ամէն ժամանակ ու ամէն տեղ տարածուած է:

Հ. Մասնաւոր Եկեղեցիք ուղղափառաց եւս կարնու են ասուիլ Կաթոլիկէ Եկեղեցի:

Պ. Այս, վասն զի մի եւ նոյն վարդապետութիւնն պահած են ամէն տեղ եւ ամէն ժամանակ:

Հ. Եկեղեցին ինչու համար Առաքելական կասուի:

Պ. Վասն զի առաքելց վարդապետութիւնը կհաւատայ, եւ զայն կառվեցընէ, եւ առաքելց յաջորդներէն կկառավարուի:

ԴԱՍ Լ.

Հաղորդութիւն սրբոց:

Հ. Երկնային եւ Երկրաւոր Եկեղեցիները Հաղորդակցութիւն կամ կապակցութիւն ունին իրարութեաւ:

Պ. Այս, վասն զի ամսամք են միոյ Եկեղեցւոյ երթեւ մարմնոյ՝ որոյ մի միայն գլուխն Քրիստոս է:

Հ. Այդ Երկու Եկեղեցեաց միութեամբն Բնէ կլին:

Պ. Նոցա անդամներուն վասելած հոգեւոր բարիքը՝ իրարու Կհաղորդութիւն:

Հ. Որննք են այդ Հաղորդութեալ բարիքը:

Պ. Երկրաւոր Եկեղեցւոյ հաւատացելոց աղօթքները, եւ Երկնային սրբոց մեզ համար արած բարեկասութիւնը:

Հ. Երկնաւոր Եկեղեցւոյ անդամներն եւս Հաղորդակցութիւն ունին իրարու հետ:

Պ. Այն, ամենայն հաւատացեալք եւս մասնակից եւ Հաղորդակից են Եկեղեցւոյ մէջ եղած շնորհաց, աղօթքից եւ բարիք գործոց:

Հ. Այս Հաղորդակցութիւնն ամէնքն եւս հաւատաքանչուն:

Պ. Ոչ, այլ որոնց որ սէրը (որ է զօդ միութեան) եւ վարուց սրբութիւնը շատ է՝ աւելի կերպով կվայեն այդ Հաղորդակցութիւնն:

Հ. Իսկիսոյ եւ ի սպառութիւնէ վարուց զուրկ եղողներ-  
նոն թնջ կերպիւ հաղորդ են բարեաց Եկեղեցւոյ:

Պ. Միայն արտաքին եւ անկատար կերպիւ:

Հ. Այս հազորդակցութիւնն ինչն համար Հաղոր-  
դութիւն սրբոց ասուել է:

Պ. Վասն զի մասնակցութիւնն է ի մէջ անդամոց  
սուբք Եկեղեցւոյ, որ ամէնքն եւս Հոգւոյն սրբոց սըր-  
բարար շնորհքն մնդունել են, եւ կոչեցեալ ին ի  
սրբութիւն:

## ԴԱՍ ԼԱ.

Քառորիւն մեղաց:

Հ. Մեղաց քաւութիւն տուողն թէ է,

Պ. Աստուած միայն:

Հ. Աստուած այս աշխարհիս մէջ որմէ ձեռօք մեղ-  
